

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍ ԿԼԱՍԻԿ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

Աստվածատիպ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
1949 թ. N 6 Տեղեկագրից.

792 (47.925) [U-88] 27548

U-88 | U-88

U-88 U-88 U-88 U-88 U-88

U-88

30/10

25

EXON-44,177 to 1961 P.

Գ. Սեփական

(Պ. Աղաբաբյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ)

Այդ թվերին մինչդեռ Կ. Պալատ հայ թատրոնն ապրում էր իր օրհասը, արգելվել էին հայերեն ներկայացումները և Պալսի գերասանները հեռացնուհանցնում էին Թիֆլիս, արեւելահայ բնմը ապրում էր իր դարգադման բուռն շրջանը: Մի կողմից հայ բնմում իշխող տեղ էր բռնել Գ. Սունդուկյանի սեպիտատկան դրամատուրգիան, մյուս կողմից Թիֆլիսի բնմը մուտք էր գործում այնպիսի միջնաշնալոր դրամատուրգի գործերը, ինչպիսին էր Օտարովսին: Օտարովսիւ՝ արեւելահայ թարգմանությունը և

ընձադրուելունը Թիֆլիսում խոշոր և նշանակալից երեսօյթ էր հայ թատրոնի համար: Ըստ էության Օսարովսկու, Գուդսի, Գրիբոեդովի և ուրիշ ուսուցիչների ղեկավարմամբ դրամատուրգների պիեսների հանդես գալով, աստիճանաբար արեկելահայ բնմը ազատագրվում է Պոլսից բերված եվրոպական թատրոնական ուսման և դրամատուրգիայից և ուր էր դնում սեփական արվեստի ուղիղ ճանապարհի վրա:

1880 թվի գեկահմերի 22-ին Թիֆլիսի հայ թատերական մշտական խումբը մեծ նախապատրաստությամբ հետո ներկայացնում է Օսարովսկու «Արդյունավոր պաշտանը» պիեսը: Աղամյանը կատարում է Վասիլի Նիկոլաևիչ Ժաղովի պատասխանատու դերը: Ժամանակի մամուլում կցկատը, ցաք ու ցրիվ տեղեկություններ միայն կան Աղամյանի այդ խաղի մասին, բայց, հենց այդ ժամ տողերն էլ վկայում են, որ Աղամյանը հիմնականում կարողացել է Թափանցել մեծ դրամատուրգի ստեղծարարական գաղափարական բովանդակությամբ մեջ և իր գերը կատարել է վարպետությամբ, չնայած, ինչպես վկայում է «Մշակ»-ը, նրան և ներկայացմանը մասնակցող մի քանի ուրիշ դերասանների ժամանակ էր սուսական կյանքը, մանավանդ առև կաշուակեր աստիճանավորների գաղափարը, որի մեջ երբեմնացես երեսմ է մի գիտավոր ասող, մի վալյուն և ազնիվ բնավորությամբ, ինչպես «Արդյունավոր պաշտանը» մեջ Վասիլի Նիկոլաևիչի Ժաղովն է:

Օսարովսկուց հետո Աղամյանին դրավող մյուս խոշոր հեղինակն եղել է Գրիբոեդովը: Աղամյանը հրապարակել է «Մեկքից պատուհաս» կոմեդիայով: Նա, հանձին Չապկու, տեսել է անկում ապրող ուսուցիչական ամենաուժեղ քննադատողի, նրա մեջ տեսել է մարդկային ամենաազնիվ դեմք, որոնք, սակայն, նեխվող արիստոկրատական միջավայրում համարվում են խելագարությամբ: Աղամյանը սիրել է Չապկուն, սիրել է ամբողջ հոգով և Ժաղովի գերը կատարելուց հաղիվ 15 օր անց, 1881 թվի հունվարի 8-ին մեծ հաջողությամբ խաղացել է Չապկու դերը Թիֆլիսում:

Այդ ուշագրավ ներկայացմանը կարևոր դերերով մասնակցել են հայ սեփականական թատրոնի խոշորագույն ներկայացուցիչներից Գևորգ և Սեփենիկ Չմշկյանները: Որ այդ ներկայացումը արժանացել է մեծ ընդունելության, երեսմ է այն բանից, որ «Մեկքից պատուհաս»-ը նույն կատարմամբ կրկնվել է ընդամենը չորս օր հետո, ապա մի քանի անգամ՝ այդ և հաջորդ թատերաշրջանում:

Աղամյանն այն աստիճան է խանդավառվել Չապկու կերպարով, որ սրտել է գրել մի առանձին աշխատություն Գրիբոեդովի «Մեկքից պատուհաս» կոմեդիայի մասին և մանրամասն վերլուծել Չապկու կերպարը: Այդ մասին նա խոսել է 1887 թվին լույս բնծայած «Շեքսպիր և չուր Համլետ սգրեքություն աղբյուրն ու քննադատությունը» աշխատության առաջաբանում: Դժբախտաբար նրա կյանքի հետագա բնթացքն արգելք հանդիսացավ ինչպես այդ, այնպես էլ մի շարք ուրիշ կարևոր ծրագրերի կենսագործմանը, նա հնարավորություն չունեցավ Չապկու կերպարի իր բմբնդությունը գրի առնելու և հրատարակելու, սակայն նա մինչև իր կյանքի վերջն էլ սիրեց Գրիբոեդովի «Մեկքից պատուհասը» և Չապկին, Համլետի հետ միասին, մնաց նրա ամենասիրած կերպարներից մեկը:

Ռուս հայտնի արվեստագետ Նեմիրովիչ-Պանչենկոն, Աղամյանի մահվան օրերին նրա մասին գրած իր հուշերում, խոսելով այն մասին, թե Աղամյանը ինչպիսի սիրված անձնավորություն էր ուսումնական թատերասերների շրջանում, ինչպիսի հաճելի ու գրավիչ զրուցակից, գրում է. «Եթե դուք պատահաբար ընդհատում էիք նրա խոսքը սրեկ բառով, նրա մեջ վայրկենապես փոփոխություն էր կատարվում, նա նայում էր ձեզ մի տեսակ քնից արթնացածի նման, այնուհետև այդ հայացքը դարձնում էր վերածվում էր մեղմ հայացքի և հանկարծ անսպասելիորեն ձեր առաջ կանգնում էր Համլետը, Չայկին ու պատասխանի փոխարեն լսում էիք մի ամբողջ մենախոսություն: Դուք մոտանում էիք, թե որտեղ էք դնում: Ձեզ առաջ կանգնած էր արտիստը բարձր գեղարվեստական ոգեշնչման պահին»:

1881 թվի նոյեմբերի 19-ին Աղամյանը դարձյալ Թիֆլիսի բեմում հանդես է գալիս Արքեմիդի դերով (Լերմոնտովի «Պիմակահանդես»-ում): Նինայի դերը կատարել է Ագնիվ Հրաչյան: Պետք է նշել, որ Համլետը, Արքեմիդը և Չայկին Աղամյանի ամենասիրած գերերկրյա են եղել:

Այդ երեսուցի է այն բանից, որ հետագայում, երբ նա առիթ ունեցավ հանդես գալ Պետերբուրգի բեմում, ընտրեց հատկապես այդ դերերը և արժանացավ մեծ ընդունելության:

1882 թվի ապրիլի 12-ին Աղամյանը հանդես է գալիս Խլեստատովի դերում, Դոդալի «Ռեկզոր» կամեդիայում: Այդ դերը նույնպես նա կատարում է մեծ հմտությամբ ու վարպետությամբ:

Թե Աղամյանը ինչպիսի մեծ սեր է ունեցել զեպի ուսուսական դրամատուրգիան, երեսուցի է այդ թվականներին նրա գրած մի նամակից, որի մեջ պահանջում է մի շարք ուսուսական պիեսներ:

1882 թվի մայիսի 22-ին Թիֆլիսից՝ Նախիջևան, Սլավո Շահբաղյանին հուպեակգրված նամակում Աղամյանը գրում է.

«Խնդիրքս այս է, որ Ձեր վերադարձին ի Տրախիո իշխան Ամատունիից օրինակիկ տալու և հետո Նախիջևանից ուղարկելու պայմանով կամ բերանացի անձամբ և կամ Սուրբուհյանցի ձեռով պահանջել հետևյալ պիեսները. «Մոսկարադ», «Կրեկնիսկա հարսանիքը», «Ռեկզոր», «Խեղճից պատահում...»¹:

Անձխոտելի փոստ է, որ միայն ուսուսական կլասիկ դրամատուրգիան հնարավորություն տվեց Պետրոս Աղամյանին ըմբռնելու Շեքսպիրի Համլետի, Օթելլոյի ու Լիր Արքայի կերպարները: Պատահական չէ, որ նույն այդ թատերաշրջաններում է, որ Աղամյանը զուգահեռաբար իր ուժերը փորձում է Շեքսպիրի պիեսներում:

Ռուսական կլասիկ դրամատուրգիան օգնում է Աղամյանին կանգնելու սեպիստական արվեստի ճանապարհի վրա, ազատագրվելու ֆրանսիական և իտալական մեղոգրամաների ուժեղ ազդեցությունից:

Եվ այդ սեպիստական արվեստի ճանապարհն է, որ նրան 1883 թվի հունվար ամսին առաջնորդում է Մոսկվա, համաշխարհային կուլտուրայի խոշորագույն կենտրոններից մեկը:

Այդ թվից էլ սկսվում է Պետրոս Աղամյանի բեմական գործունեության երրորդ՝ ավելի բեղմնավոր ու հասունացած շրջանը:

¹ Թատերական խանդարան, Պ. Աղամյանի արխիվ:

Ռուսական բեմը Աղամյանին տալիս է կլասիկ բարձր արվեստի ճանաչիր, սուսական բեմը նրան բնագոյնում է մեծագույն սիրով: Չնայած նա խաղում էր հայերեն և ֆրանսերեն լեզուներով, ուստի հասարակությանը լիովին հասկանում է նրան, նրա մեջ տեսնում բացառիկ տաղանդ, բեմական տնօրեսի կարողութուններ ու չի վարանում փշրել արագիցիան ու համաշխարհային արտիստի զափնեպանները հետ վերցնելով ֆրանսիացի և իտալացի դերասաններին, տալ Աղամյանին:

Մոսկվայում և Պետերբուրգում Աղամյանը հնարավորութուն է ունենում մտախիչ ծանոթանալու ուստի հռչակավոր արտիստներ Սամոյլովի, Պրոսերի, Երմոլովայի և ուրիշների հետ, հագորդակից դառնալու նրանց բեմական բմբուռներին: Նա ազահոբեն սնվում է սուսական բարձր արվեստի ակունքներից: Երա որոնող, մաքառող սէին գրանով չի բավարարվում, անձնական կապեր է հաստատում շատ նշանավոր դրամատուրգների, գրողների, արվեստագետների հետ (Սուլսրին, Սովինա, Նեմիրովիչ-Պանչենկո, Լենսկի և ուրիշներ):

Մոսկվա գալուց հազիվ մեկ ամիս հետո՝ 1883 թվի փետրվարի 13-ին Աղամյանը մի նամակում գրում է.

«Ծանոթացա լուր Գլխավոր զերատանաց, մանավանդ Պրոսերի, Դավառովի, Ռուգանի, Չերնովի և գերատանուհյաց հետ, Լենատվսկիի և մանավանդ Քորշի հետ, որի հոր հետ արդեն ծանոթ լինելու հիշեցի, որ Արատաումանում բժիշկ էր գինովորական, Բուլգակի, Բոլ և Դավիդովը, որ միշտ ինձ կը համբուրե: Ծանոթացրին շատերի հետ, հիմակ այցելում են ինձ, ես էլ գնում եմ փոխարեն: Դավիդովը ինձ հրավիրեց ճաշի՝ երեք օր առաջ: Լավ տուն տեղ ունի, մի բարի ուստ կին և երեք հրեշտակաման զավակներ... երեկոյան պնացիոնք Լենատվսկիի թատրոնը, լսեցի իրեն երգելը, շատ անուշ ձայն է»¹:

Այլևի ուշագրավ է Աղամյանի հանդիպումը Օստրովսկու և Այվազովսկու հետ՝ Մոսկվայում: Նրանք երկուսն էլ մեծ հարգանքով են ընդունել Աղամյանին, երկար խոսել նրա հետ, քաջալերել նրա հաջողութունները, խորհուրդներ տվել, սպիներ նշել: Նույն նամակի շարունակությամբ մեջ Օստրովսկու հետ ունեցած իր հանդիպման մասին Աղամյանը գրել է.

«Ներկայացումից հետո, երեկոյանց ինձ, ներկայացա Օստրովսկին, շատ սիրով վարկեցավ հետո, ինձ հրավիրեց իրեն մոտ ճաշի, սրովհետև այժմ Մոսկվայում է բնակվում, և երբ լսեց, որ «Արդյունավոր պաշտոն» պիտան, որ յուր գրածն է, թարգմանված է հայերեն և ես ներկայացրել եմ ժաղովրդ, սաստիկ ուրախացավ, առաջ շատ կցավիմ, որ հիվանդոտ եմ և չեմ կարող զալ ձեր խաղը տեսնելու, բայց ունիմ բարեկամներ, որոնց խոսքին կհավատամ և միշտ կկարգամ լրագիրներում ձեր մասին գրվածները»²:

Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում Աղամյանը գերազանցապես խաղում է Ենքսպիսի պիեսները և Լեբմոնտովի «Դիմակահանգեստ»-ում: Երկու գեղեցիկ էլ խոշոր հաջողութուններ է աւելնում:

Ռուսական բարձրարժեք արվեստի զուգակցումը Աղամյանի խոշոր տաղանդի հետ, ստեղծում են համբատի և Արբենինի այնպիսի կլասիկ կա-

¹ Թատերական Թանգարան, Պ. Աղամյանի արխիվ:

² Նույն տեղում:

տարումներ, որոնց մասին իրավացիորեն ուստական մամուլը միաբերան վկայում է, որ Աղամյանը հանդիսանում է այդ գերերի լավագույն կատարողը:

Բացի Համլետի և Արքեմիդի գերերից, Մոսկվայում, Պետերբուրգում, Խարկովում, Կիևում, Օդեսայում և այլ քաղաքներում Աղամյանը կատարում է նաև Օթելլոյի, Լիր Արքայի, Քինի, Ուրիել Ակսառայի և Կսերազոյի գերերը, բայց այս բոլորի մեջ նրա սիրած գերերը մնում են Համլետը և Արքեմիդը: Այդ ցույց է տալիս Աղամյանի առանձնահատուկ վերաբերմունքը գեղի այդ ներկայացուցիչները, որոնց մասին չարունակ խոսել է իր նամակներում:

Թե Աղամյանը ինչպիսի մեծ հաջողությամբ է ուստական կենտրոնական քաղաքներում խաղացել Արքեմիդի և Համլետի գերերը, վկայում են այն հարյուրավոր ռեցենզիաները, որոնց ամբողջությամբ մի սովոր հասարակարգ է կազմել: Բերենք միայն մեկական վկայություն ուստական մամուլից:

«Սովբեմենայա իզվեստիա» պարբերականը խոսելով Աղամյանի Արքեմիդի գերակատարման մասին, պնդում էր, որ Աղամյանը իր այդ խաղով ապացուցել է, որ նա թե՛ միայն հանճար է, այլև ունի խորադին միտք և քննական ընդարձակ ձիրք»:

«Մուզիկալնի ի տեսարանի վեստնիկ» պարբերականը Աղամյանի մասին գրել է.

«Նա համենայն դեպս արտասովոր արտիստ է. նրա պետական արտաքինը, սքանչելի շարժումները, հստակ գիկցիան, որը բոլորովին չի ծախում հայերեն լեզվին չընտելացած ականջը, պատկերավոր ախլի խորը ըմբռնումը, որը երևան է գալիս նրա առաջին քայլից մինչև վերջին խոսքը, անկեղծ զգացմունքը, արտահայտիչ միմիկան և պլաստիկ ժեստիկուլացիան, բնավ բմրանումը և բնական, անբռնազրոտիկ խաղը, — այս բոլորը Աղամյանին պնդում են առաջին պլանի վրա, գտնում նշանավոր արտիստները շարքը»:

Իսկ «Մոսկովսկի վեդոմոստի»-ն գրում էր. «Ոչ Ռուսին, ոչ էլ Սովետին չեն հավասարվում Աղամյանին Համլետի գերում»:

Աղամյանի Արքեմիդի և Համլետի գերակատարումների մասին գրական կարծիք են հայտնել այնպիսի խոշոր ուսու արվեստագետներ, ինչպիսիք են Նեմիրովիչ-Պանչենկոն, Թատերագետ Չուլկոն, գերասանուհի Երմոլովան և ուրիշները:

Ուշագրավ է, որ Աղամյանը իր ուստատանյան զործունեությունում բոլոր շրջանում երբեք խաղացանիկից դուրս չի գցել Լեմոնտովի «Պիմակահանդեսը» և շարունակ զբաղվել է այդ պիեսով, կատարելագործել է իր գերը ու խաղացել մի քանի քաղաքներում՝ օրը օրին այդ մասին նամակներով հայտնելով իր բարեկամներին ու ծանոթներին:

1883 թվականի մարտի 6-ին Մոսկվայից գրած մի նամակում ասում է.

«Այս երկու ներկայացնում եմ «Մասկարադ», ուստաց Լիանոզովի թատեր մեջ»:¹

¹ Թատերական թանգարան, Պ. Աղամյանի արխիվ:

եռւոյն ներկայացումից հինգ օր վերջ Ադամյանը գրում էր.

«Անցյալ կիրակի երեկո ներկայացրինք «Մասկարադը»: Այնուհետև պատմում է, թե ով ինչ գեր է կատարել և անդրադառնալով իր գերակատարմանը ասում է.

«Եւ իմ դերս, միայն ձեզ կարող եմ ասել, որ ավելի լավ կատարեցի, քան թե առաջ, նոր փոփոխություններով, մանավանդ վերջին գործողությանը, երբ պեռալով, շաղկիս պատռելով հարձակվեցաւ անհայտին վրա, մի կին, որը տաղին կարգում նստած էր, վախցավ ու պոռալով վախով ներկայացման վերջին բոլորը մեկ՝ 11 անգամի չափ ծափահարելով, ինձ դուրս կանչեցին և յուրաքանչյուր անգամ էլ երմոլովա գերառանուհին և Վոլգինան ոտքի ելնելիս ինձ կը ծափահարեին և մեջերսին կասեն եղել թե այսուհետև խորհուրդ չենք տա Պրոսպերին՝ Արքանինի գերը կատարելու: 1885 թվականի ապրիլի 19-ին Խարկովից գրում էր.

«Երկու օր է, որ այստեղ եմ, «Նարսիզի տեսարի» մեջ ներկայացումներ տալու համար: Չորս ներկայացում պիտի տամ: Այսօր ասալինը «Մասկարադ»:

Ադամյանը ոչ մի տեղ իրեն այնքան հարազատ, ջերմ մթնոլորտում չի գտնուել, որքան Ռուսաստանում, ուստի արվեստագետների շրջապատում, որտեղ նրան բարձր էին գնահատում խոշորադուսն ուստի թատերագետներն ու արվեստագետները: Նրանցից յուրաքանչյուրը Ադամյանի մասին պահել է ջերմ հուշեր:

Այսպիսի հարազատ ու անկեղծ, միաժամանակ համաշխարհային տաղավոր արվեստով հագեցված մի մթնոլորտում է, որ թրծվել է Ադամյանը ու ձեռք բերել իր մեծ հուշակը:

Առանց ուստական բեմի և ուստ արվեստագետների ազդեցության, Ադամյանը կմնար միջակ դերասան:

Եվ պետք է նշել, որ ուստական այդ միջավայրի ու սուլթանական թյուրքիայի կոշմարային միջավայրի հակադրությունն էր, որ 1888 թվականից սկիզբ դրեց Ադամյանի արագեղիային և երեք տարի քարշ տալով նրան, ընդմիջա խորտակեց:

Տիրուր, բայց իրական վաստ է, որ Ադամյանը պղպ, որ սխալվել է Պոլիս վերադառնալով: Անշուշտ նա ուներ մեծ ծրագրեր, նրա նպատակը Պոլսում մնալը չէր, այլ այնտեղից անցնել արտասահման, եվրոպական բեմերում մրցել Ռուսիի, Սալվինիի և ուրիշների հետ, սակայն թյուրքական բռնապետական միջավայրը նրան զրկեց ոչ միայն այդ ծրագրի կատարումից, այլև թույլ չտվեց, որ Պոլսում կատարի իր սիրած գերերը, գոնե Համլետը:

Բաղադրական ուժեղ հալածանքը, լրտեսական ցանցի ստեղծած մղձավանջային պայմանները, հասարակության հուսալքումը, սարսափահար փախուստը թատրոնից և առհասարակ արվեստից, տաղավոր ամեն մի խոսքի հալածումը և հետապնդումը բանտով ու աքսորով, այս բոլորի արդյունքը հանդիսացող տնտեսական վատթար վիճակը ղեկանում են Ադա-

մյանին, հուսալքում, մեկանիսով ապառուժ կյանքի նկատմամբ աշխարհն լավատես, ապագայով աշխարհն խանդավառվող, կենսուրախ դերասանին, քայքայում են նրան ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեպես:


Պոլսում զրեթե անօղնական է մնացել Աղամյանը: Ոչ ոք մոտիկից չի մտահոգվել նրա վիճակով: Երա կյանքի այդ ամենածանր օրերին օղնության և ցարեկամության ձայները լսվել են հստակ հյուսիսից, Մոսկվայից ու Պետերբուրգից: Այդ քաղաքներում է, որ սուս արվեստագետները երեկոներ են կազմակերպել ի պատիվ Աղամյանի, վերհիշել են նրա փառքի օրերը, նյութական միջոցներ հավաքել և ուղարկել են Պոլս՝ խնայելու: Համար մեծ արվեստագետի վերջա՞յն: Նրանք խնդրել են Կ. Պոլսի սուսական դեսպանատնից սուսական հիվանդանոցում բուժել նրան: Աղամյանը փոխադրվել է սուսական հիվանդանոց և խնամվել ուսումնական պրոֆեսորների կողմից: Դժբախտաբար նրա օրգանիզմում առաջացած հիվանդությունը—կոկորդի տուբերկուլյոզը—ընդհատել է նրա կյանքի թևը: 1891 թվականի հունիսի 4-ին՝ իր բնական գործունեության ամենարժք ծաղկման օրերին՝ կյանքի քառասուներկուերորդ տարում իջեցնելով գերեզման:

Նույնիսկ մահվան օրերին Աղամյանի վերջին խոսքերը եղել են մուսաստանը և սուս կուլտուրան, միշտ վերհիշել է մուսաստանում անցկացրած իր երջանիկ օրերը և բարձր գնահատել սուսական արվեստը, նրա համաշխարհային խոշորագույն նշանակությունը:

87548

A 20288





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007228

ⁿ
A 20288

20288